ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(12 փետրվարի, 2015 թ.)

Վեհափառ Տեր,

Գերաշնորհ սրբազան հայրեր,

Հարգելի՛ ներկաներ,

Աստծո կամոք արդեն վեցերորդ տարին է, ինչ Հայաստանի Հանրապետության հոգեւոր ու աշխարհիկ կրթօջախների սաները համատեղ հիշում, խնկարկում եւ փառաբանում են Վարդանանց սուրբ նահատակների հիշատակը: Ուրախությամբ պետք է փաստենք, որ Մայր բուհի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի նախաձեռնած աստվածահաճո այս ձեռնարկին միացել են նաեւ հայաստանյան պետական բուհերի մի շարք շնորհալի ուսանողներ:

Այսպիսով, բարի ու գեղեցիկ ավանդույթի համաձայն՝ այսօր բարձրագույն կրթության ոլորտի մշակներս հույսով, հավատով ու մեծագույն սիրով այցի ենք եկել Հայոց հոգեւոր մայրաքաղաք:

451 թվականի մայիսին՝ Ավարայրի ճակատամարտում, հայրենիքի, Մայր Եկեղեցու եւ քրիստոնեական հավատի պահպանման համար նահատակված Վարդանանց զորավարներն ու 1036 մարտիրոսները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու մեծագույն սրբերից են: Իրենց նահատակությամբ նրանք հաստատեցին հայ ժողովրդի ապրելու կամքը եւ լինելության իրավունքը:

Վարդանանց տոնը մեր Եկեղեցու տոնացույցի ամենասիրված, ազգային տարրերով առանձնացող տոներից մեկն է, որը մեծ շուքով եւ հանդիսավորությամբ հիշատակվում է հայ երիտասարդների շրջանում:

Տոնի խորհուրդն էլ ավելի է կարեւորվում արդի պայմաններում, երբ ուժգնացել է մեր հարեւանների հայատյաց կեցվածքը, ռազմական հռետորաբանությունն ու միջադեպերը սահմանին:

Հիրավի, այս տոնը հայրենասիրության եւ ոգու առկայության դրսեւորում է. կա՞ արդյոք ավելի վեհ զգացում, քան ապագա հոգեւորականին ու գիտնականին տեսնել կողք կողքի, կա՞ արդյոք ավելի հոգեպարար զգացում,

Ս. Վեղարշակաց եղբայրաց մղան Հնդկաստանում

քան այն, որ երիտասարդ սերունդն անթաքույց ակնածանքով է հիշում քաջ նախնյաց սրբազնագույն առաքելությունը:

Վեհափա՛ռ Տեր, ցանկանում եմ տեղեկացնել, որ Մայր բուհի կամարներից ներս հաճախ են կազմակերպվում ռազմահայրենասիրական ու հոգեւոր դաստիարակության ոգով պարուրված միջոցառումներ: Մայր բուհում իր ուրույն դերակատարությունն ունի Ձեր օրհնությամբ գործող Աստվածաբանության ֆակուլտետը, որը յուրահատուկ վեհություն է հաղորդում համալսարանին:

Մեր ուսանողները պարբերաբար այցելում են պատմամշակութային վայրեր, զորամասեր, Արցախ:

Ավարայրի ճակատամարտում հայրենիքի, Հայ Եկեղեցու եւ քրիստոնեական հավատի պահպանման համար նահատակված Վարդանանց զորավարների հիշատակն անմար պահելուն զուգընթաց՝ նաեւ Արցախյան ազատամարտում նահատակված նոր Վարդանների անուններն են ոգեկոչվում: Մեկ անգամ եւս այս դահլիճում պատիվ եմ ունեցել փաստելու, որ զոհված 27 համալսարանական ազատամարտիկներից 5-ը Վարդան էին, եւ ի պատիվ նրանց ու Ավարայրի Վարդանանց՝ Մայր բուհի ռազմահայրենասիրական դաստիրակաության ակումբը կոչվում է «Վարդանանք»:

Վեհափա՛ռ Տեր, ամեն տարի Վարդանանց տոնի առիթով համալսարանականները պատիվ ունեն այցելել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ստանալ ոչ միայն Ձեր օրհնությունը, այլեւ՝ նոր ուժ, վստահություն եւ լավատեսություն: Շնորհակալ ենք Մայր բուհի հանդեպ Ձեր ուշադրության եւ բարի վերաբերմունքի համար:

Խոնարհաբար ու մեծագույն ակնածանքով ԵՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի եւ ուսանողության անունից վերստին շնորհավորում եմ այս Սուրբ տոնի եւ Ձերդ Սրբության անվանակոչության օրվա կապակցությամբ՝ մաղթելով Ձեզ անսպառ կորով ու եռանդ, քաջառողջություն՝ ի նպաստ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու առաջընթացի ու զարգացման: